ՆԱԽԱԳԻԾ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

..... 2014 թվականի N .....Ա

«ԳՅՈՒՄՐՈՒ ՏԵԽՆՈՊԱՐԿ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՈՒՄ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԼՈՒԾԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ ՈՐՈՇՄԱՆԸ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 67, 68 հոդվածներով և 27 հոդվածի 3-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է՝

1. «Գյումրու տեխնոպարկ» փակ բաժնետիրական ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովում հավանություն տալ ընկերության լուծարման մասին որոշմանը:

2. Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարին՝ ապահովել պետական բաժնեմասի լիազորված ներկայացուցչի մասնակցությունը «Գյումրու տեխնոպարկ» փակ բաժնետիրական ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովում ընկերության լուծարման և այդ գործընթացից բխող որոշումների ընդունման համար:

3. Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարին, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարին, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության պետին և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահին՝ «Գյումրու տեխնոպարկ» փակ բաժնետիրական ընկերության լուծարման հանձնաժողովի կազմում առաջադրել համապատասխան ներկայացուցիչների թեկնածություններ:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԳՅՈՒՄՐՈՒ ՏԵԽՆՈՊԱՐԿ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՈՒՄ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԼՈՒԾԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ ՈՐՈՇՄԱՆԸ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչությունում քննարկման առարկա է դարձնել մինչև 50 տոկոս պետական բաժնեմաս ունեցող ընկերություններում պետական բաժնեմասի հետագա պահպանման նպատակահարմարության հարցը կամ դրանցում լիազոր ներկայացուցիչների ինստիտուտ ներդրման հարցը:

ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչությունը գրություններով դիմել է լիազորված պետական կառավարման մարմիններին՝ մինչև 50 տոկոս պետական բաժնեմաս ունեցող ընկերությունների ցանկը, ինչպես նաև այդ ընկերություններում պետական բաժնեմասի հետագա պահպանման կամ դրանցում լիազոր ներկայացուցիչների ինստիտուտի ներդրման նպատակահարմարության վերաբերյալ դիրքորոշում հայտնելու համար:

ՀՀ էկոնոմիկայի նախարարության տրամադրած տեղեկատվության համաձայն «Գյումրու տեխնոպարկ» ՓԲԸ-ում պետական բաժնեմասը կազմում է 49,02 տոկոս: Հաշվի առնելով, որ ընկերությունը հիմնադրումից մինչև օրս գործունեություն չի իրականացրել, ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը ընկերությունում պետական բաժնեմասի հետագա պահպանումը գտնում է ոչ նպատակահարմար և առաջարկել է, հիմք ընդունելով ընկերության ոչ պետական բաժնեմասի սեփականատիրոջ՝ «Անալիտիկսարք-մեկ» ՓԲԸ-ի համաձայնությունը, սկսել լուծարման գործընթաց:

ՀՀ էկոնոմիկայի նախարարության տեղեկատվության համաձայն ընկերության ակտիվներն իրենցից ներկայացնում են 22 հատ հիմնական միջոցներ՝ 9794,0 հազար դրամ հաշվեկշռային արժեքով, 17669,0 հազար դրամ այլ ոչ ընթացիկ ակտիվներ և 413,0 հազար դրամ այլ ընթացիկ ակտիվներ: Ընկերությունն անշարժ գույք չունի:

Ընկերության պարտավորությունները կազմում են՝

- երկարաժամկետ բանկային վարկեր և փոխառություններ	17005,0 հազար դրամ
- հարկային պարտավորություններ	671,0 հազար դրամ
- կրեդիտորական պարտքեր աշխատավարձի գծով՝	2931,0 հազար դրամ
- այլ ընթացիկ պարտավորություններ	15,0 հազար դրամ
Ընդամենը	**20622,0 հազար դրամ:**

ՏԵՂԵԿԱՆՔ

«Գյումրու տեխնոպարկ» փակ բաժնետիրական ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովում ընկերության լուծարման մասին որոշմանը հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունման հիմնավորմանը ներկայացվող պահանջների վերաբերյալ

1. Իրավական ակտերի ցանկ, որոնց հիման վրա մշակվել է իրավական ակտի նախագիծը՝

«Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենք:

2. Նախագծի ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերում փոփոխություններ կամ լրացումներ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

3. Պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի բյուջեում ծախսերի և եկամուտների էական ավելացում կամ նվազում չի նախատեսում

4. Նախագծի հեղինակների (մշակողների) անունները, ինչպես նաև այն մարմինների ցանկը ում հետ նախագիծը համաձայնեցվել է՝

հեղինակ (մշակող)՝ ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն

համաձայնեցվել է ՀՀ արդարադատության նախարարության, ՀՀ էկոնոմիկայի նախարարության, ՀՀ ֆինանսների նախարարության և ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հետ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«Գյումրու տեխնոպարկ» փակ բաժնետիրական ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովում ընկերության լուծարման մասին որոշմանը հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի վերաբերյալ ստացված դիտողությունների և առաջարկությունների վերաբերյալ

Առաջարկության հեղինակը, գրության ամսաթիվը, գրության համարը	**Առաջարկության բովանդակությունը**	**Եզրակացություն**	**Կատարված փոփոխությունը**
ՀՀ ֆինանսների նախարարություն 17.01.2014թ. N 1/9.2/434-14	Առաջարկություններ չկան		
ՀՀ էկոնոմիկայի նախարարություն 16.01.2014թ. N01/21.2/108-14	Առաջարկություններ չկան		
ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե 16.01.2014թ. N 01/11-1/313-14	Առաջարկություններ չկան		
ՀՀ արդարադատության նախարարություն 11.02.2014թ. N 01/782-14	Նախագծի 1-ին կետում «որոշման ընդունմանը» բառերն անհրաժեշտ է փոխարինել «որոշմանը» բառով՝ համաձայն նախագծի վերնագրի:	Ընդունվել է	Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն: